## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 114-Ա

Գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0008-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գագիկ Գևորգի Մինասյանը (ծնված 06/01/1958 թվական), դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող 0,06 հեկտար մակերեսով բնակավայրերի տնամերձ հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շենքերի և շինությունների ու տնամերձ հողամասին կից ավելի օգտագործվող 21,2 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու և դրանք օրինական համարելու խնդրանքով:

Շիրակի մարզի Ախուրյան գյուղի Ջրաշինարարների բանավան, 10-րդ փողոց, 29 հասցեում գտնվող՝ Գագիկ Գևորգի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող 0,06 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա գտնվող 1992 թվականին կառուցված (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը) 147,41 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի նշանակության կիսակառույց շենքերը և շինությունները համարվում են ինքնակամ կառույցներ, որոնք կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Քաղաքացի՝ Գագիկ Գևորգի Մինասյանը, փաստացի տիրապետում և օգտագործում է 08-007-0008-0008 կադաստրային ծածկագրով, 0,06 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա գտնվող ինքնակամ համարվող շենք շինությունները և օրինական հողամասին կից 21,2 քառակուսի մետր մակերեսով ավելի օգտագործվող հաղամասը, որոնք օրենքով սահմանված կարգով համարվում են այն ֆիզիկական անձանց սեփականությունը, ովքեր տիրապետում են այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգի 4, 8, 10, 11 և 22.1 կետերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Ճանաչել քաղաքացի Գագիկ Գևորգի Մինասյանի (ծնված 06/01/1958 թվական) սեփականության իրավունքը Ախուրյան համայնքի, Ախուրյան գյուղի Ջրաշինարարների բանավան, 10-րդ փողոց, 29 հասցեագրմամբ տնամերձ հողամասի վրա 1992 թվականին կառուցված (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը) ինքնակամ համարվող 147,41 քառակուսի մետր ներքին մակերեսով կիսակառույց բնակելի նշանակության շենքի և շինությունների նկատմամբ, դրանք ճանաչել օրինական,՝ առանց օրինականացման վճարների գանձման:
2. 08-007-0008-0008 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,06 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին կից, ավելի օգտագործվող 0,00212 հեկտար մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ ճանաչել Գագիկ Գևորգի Մինասյանի սեփականության իրավունքը,՝ առանց կադաստրային արժեքի գանձման:
3. Սահմանված կարգով Գագիկ Գևորգի Մինասյանին տրամադրել կիսակառույցն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու համար:
4. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«02» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 115-Ա

02 փետրվարի 2023 թվական

գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ՄՈՒԼՏԻ ԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲՆԱԿԱՆ ՍԵՂՄՎԱԾ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի Նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման առաջին կետի թիվ 1 հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «ՄՈՒԼՏԻ ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը՝ **որոշում եմ**

1.«ՄՈՒԼՏԻ ԳԱԶ» (ՀՎՀՀ 03523012) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրում սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն 2023 թվականի համար:

2.Հաստատված թույլտվությունը սահմանված ժամկետում հայտատուին հանձնել միայն տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրը ստանալուց հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

02 փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2023 թվականի N 116 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-006-0081-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության, 08-006-0081-0001 կադաստրային ծածկագրով 0,06994 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակություն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

«02» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 փետրվարի 2023 թվականի N 117 -Ա

Գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի, դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ գյուղի 11-րդ փողոց տուն 9 հասցեի 08-108-0046-0004 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու մասին» թիվ 15-Ա որոշման նախաբանում և 1-ին կետում «72,4 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, բաց պատշգամբը» բառերը և թվերը փոխարինել «133,72 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, 56,12 քառակուսի մետր ներքին մակերեսով բաց պատշգամբը և 58,05 քառակուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքը» բառերով և թվերով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**Ո Ր Ո Շ Ու Մ**

«03» փետրվարի 2023 թվականի N 118 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԻ Հ"ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39 ՀԱՍՑԵԻ 08-007-0163-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հովհաննես Գագիկի Մոսոյանը (ծնված 30/08/1966 թվական) դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 08-007-0163-0006 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,20236 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի Հ.Հովսեփյան փողոց, թիվ 39 հասցեի տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված 191,94 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, 54,30 քառակուսի մետր արտաքին մակերեսով նկուղը, 36,96 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 64,64 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը, 2,56 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը և 26,7 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը կառուցվել են 2004-2020 թվականներին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետի ա), բ) ենթակետերի, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի)

գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Ախուրյան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի Հ.Հովսեփյան փողոց, թիվ 39 հասցեի հողամասի վրա 2004-2020 թվականներին ինքնակամ կառուցված 191,94 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, 54,30 քառակուսի մետր արտաքին մակերեսով նկուղը, 36,96 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 64,64 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը, 2,56 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը և 26,7 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:

2. Որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի տան և նկուղի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օժանդակ շինությունների համար ահմանել 6000 Հայատանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Ախուրյան գյուղի համար 14-րդ գոտում հաստատված է 0,1209: Ինքնակամ կառուցված 191,94 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տան և 54,30 քառակուսի մետր արտաքին մակերեսով նկուղի օրինականացման վճարը կազմում է 297704 Հայաստանի Հանրապետության դրամ իսկ 36,96 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակի, 64,64 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքի, 2,56 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանի և 26,7 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպի օրինականացման վճարը կազմում է 94926 Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը օրինականացման վճարը կազմում է 392630 (երեք հարյուր իննսուներկու հազար վեց հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 119-Ա

<<03>> փետրվարի 2023 թվական գյուղ Ախուրյան

## ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ՝ ԳՈՀԱՐ ԴԱՎԻԹԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ՌԱԶՄԻԿ ԴԱՎԻԹԻ ԱՐԱՍԽԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՀԱԿՈԲ ԴԱՎԻԹԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 962-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 02-ի թիվ 6 արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի 42-րդ փողոցի 37-րդ տուն հասցեում բնակվող, առանց ծնողական խնամքի մնացած անչափահասներ՝ Գոհար Դավիթի Մանուկյանին (ծնված՝ 2007 թվականի օգոստոսի 28-ին), Ռազմիկ Դավիթի Արասխանյանին (ծնված՝ 2009 թվականի հունվարի 13-ին) և Հակոբ Դավիթի Մանուկյանին (ծնված՝ 2012 թվականի հունվարի 16-ին) վերցնել սկզբնական հաշվառման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

03 փետրվարի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«03» փետրվարի 2023 թվականի թիվ 120

Գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉՈՐՍ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 180-Ա, 2022 թվականի ապրիլր 26-ի թիվ 75-Ա և 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 239-Ա որոշումները, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման հավելվածով ըստ լոտերի ներկայացված հողամասերի օտարման նպատակով, 2023 թվականի մարտի 10-ին, ժամը 11:00-ին, Ախուրյանի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի, 42 շենք) կազմակերպել աճուրդ:

2.Աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական կայքէջում, Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքէջում, Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակել հայտարարություն՝ սակարկությունների անցկացման տեղի, օրվա, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների, տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների մասին:

3.Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական

գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 121-Ա

03 փետրվար 2023 թվական

գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ ենթակետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոեմբերի 17-ի թիվ 199-Ն որոշման 1-ին կետի թիվ 1 հավելվածի, 1-ին կետի 14-րդ ենթակետի «դ» պարբերության դրույթներով և հաշվի առնելով «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»ՓԲԸ-ի հայտը՝որոշում եմ

1.Տալ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»ՓԲԸ-ին (ՀՎՀՀ01551651) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրերում Գյումրու խճղ.6 հասցեում 3.5քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2023 թվականի համար

2. **Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից,որոնց ուղղված է ակտը,եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

03 փետրվար 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 122-Ա

«03» փետրվարի 2023 թվական                                        գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՎԱՐԱԶԴԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ,ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Վարազդատ Հովհաննիսյանի հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Վարազդատ Հովհաննիսյան»-ին (ՀՎՀՀ 57410191) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Վահրամաբերդ 15-րդ փ 2 88քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2.Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ Ն 123-Ա

«03» փետրվարի 2023 թվական  գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՋՈՒՌ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՆՆԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Աննա Թումասյանի հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Աննա Թումասյան»-ին (ՀՎՀՀ 57345998) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Ջաջուռ 1-ին փ 53 23.9քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2. Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական

գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ  N 124-Ա

«03» փետրվարի 2023 թվական  գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՋՈՒՌ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԷԼՎԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Էլվիրա Մարգարյանի հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Էլվիրա Մարգարյան»-ին (ՀՎՀՀ 70330871) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Ջաջուռ 1-ին փ 104տ 34.7քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2. Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**ՈՐՈՇՈՒՄ N 125-Ա**

«03» փետրվարի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԱԲԱՑ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԲԻԼՈՌ ԱՆՂԱԼԱԴՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Բիլոռ Անղալադյանի հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Բիլոռ Անղալադյան»-ին (ՀՎՀՀ60503972) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Այգաբաց 8-րդ փ 2 18քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2. Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ N 126-Ա

«03» փետրվարի 2023 թվական    գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՄԵՆՈՒՀԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Արմենուհի Նալբանդյանի հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Արմենուհի Նալբանդյան»-ին (ՀՎՀՀ57417243) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Հովունի 1-ին

փ 2-րդ նրբ 6տ 24քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2.Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03 փետրվարի 2023 թվական

գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 127-Ա

«03» փետրվարի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԼԱԼԱ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա»,«բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հաշվի առնելով Լալա Այվազյանի հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Լալա Այվազյան»-ին (ՀՎՀՀ 57326196) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Երազգավորս 3-րդ փ 72տ 19 քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2.Անհատական իրավական ակն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից,որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 128-Ա

«03» փետրվարի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԷՄՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Էմմա Գրիգորյանի հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Էմմա Գրիգորյան»-ին (ՀՎՀՀ57321812) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Երազգավորս 2-րդ փ 48 25քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2.Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 129-Ա

«03» փետրվարի 2023 թվական — գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՆԱՐԻՆԵ ՄԱՐՈՒՔՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները, Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Նարինե Մարուքյանի հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Նարինե Մարուքյան»-ին (ՀՎՀՀ57317739) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Կապս մայրուղի 2 20քմ ոչ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2.Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«03»փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
գ. Ախուրյան, Գյումրիի խճուղի 42, հեռ (0312) 70885 , 091420451 akhuryan.shirak@gmail.com


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
03 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 130-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-089-0505-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՆՐԲԱՆՑՔ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն ՀՀ Կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 13-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի և 50-րդ կետի պահանջների՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի տարածքում գտնվող 08-089-0505-0001 կադաստրային ծածկագրով 0,536771 հեկտար մակերեսով հողամասը որպես նրբանցք համարակալել հետևյալ կերպ՝ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Շիրակ, Գլխավոր փողոց, 7-րդ նրբանցք:

Ախուրյան համայնքի ղեկավար՝ ________________ Ա. Իգիթյան

03 փետրվարի 2023 թ.
գ.Ախուրյան